թեան դէմ եւ դաւաճանութեամբ ստացաւ արաբական ոստիկան Իւսուֆից արքայական թագ: Նրա հիմնած դժբախտ թագաւորութիւնը տեւեց հարիւր տարուց մի փոքր աւելի եւ ունեցաւ վեց թագաւորներ միայն: Դրանցից վերջինը, Սենեքերիմը, սաստիկ հարուածներ կրելով նոյնիսկ արաբցիներից եւ ապա թուրքերից, չկարողացաւ երկար դիմանալ եւ 1021 թոին, իր հաճութեամբ, իր տէրութիւնը յանձնեց յունաց Վասիլ կայսրին եւ նրա փոխարէն ստացաւ կայսրից Սեբաստիա քաղաքը իր գաւառներով: 14.000 ձիաւորներով գահազուրկ թագաւորը տեղափոխուեցաւ իր ստացած նոր երկիրը բնակութեան համար: Վասպուրականը դարձաւ յունական նահանգ:

Այն բոլորը, ինչ որ Սենեքերիմը ցուցակով յանձնեց յոյներին, հետեւեալն էր. 10 քաղաք, 72 բերդ եւ 4400 գիւղ: Նա չյանձնեց յոյներին միայն վանքերն ու անապատները, որովհետեւ դրանք աստծոյ եւ ժողովրդի սեփականութիւնն էին: Վանքերի թիւը հասնում էր 900-ի, որոնցից 115-ը մեծամեծ մենաստաններ էին: Համեմատեցէ՛ք, թագաւորութիւնն իր երկրի պահպանութեան համար ունէր միայն 72 բերդ, իսկ աղօթելու համար՝ 900 վանքեր, լի բազմաթիւ կրօնաւորներով, որ միշտ քարոզում էին աշխարհի ունայնութիւնը...

Վասպուրականը յոյների ձեռքումն մնաց միայն 107 տարի, վերջը տիրեց Միրան անունով ամիրան եւ իրան կոչեց Շահ-արմեն, այսինքն թագաւոր հայոց:

ԺԳ. ԴԻՒԹԱԿԱՆ ԳԱՒԱԶԱՆԸ

Կեսրից բաւական անցել էր, երբ մենք հասանք Այգեստան. մարդիկ չէին երեւում, փողոցները համարեա թէ դատարկ էին: Դեռ շարունակողող տօթը քշել էր նրանց այգիների ու պարտէզների հովասուն ստորերների ներքոյ:

Անցնելով կարգով տնկած հովանաւոր ուռիների եւ բարդի ծառերի տակից, մենք մտանք այն փողոցը, որտեղ գտնուում էր վարպետ Փանոսի տունը: Այստեղ ինչ-որ աղմուկ էր լսում: Հեռուից նշմարեցինք, փոշու ամպերի մէջ կորած, աղաղակելով, ճիչ բարձրացնելով, վազվզում էին մի խումբ երեխաներ: Երբ մօտեցանք, տեսարանը աւելի պարզուեցաւ: Երեխաները հալածում էին մի պառաւ կնոջ, որը նրանց առջեւից փախչելով, երբեմն կանգ էր առնում, սպառնալիքներ էր կարդում, եւ երեխաները, այդ լսելով, նոյնպէս կանգ էին առնում, փոքր-ինչ հանգստանում էին, իսկ երբ պառաւը շարունակում էր գնալ, փոքրիկ չարաճճիները կրկին աղաղակ էին բարձրացնում, շր-